ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

# ՈՐՈՇՈՒՄ

## Հայցադիմումը վարույթ ընդունելու, պատասխանողից ապացույցներ պահանջելու

## և դատական ակտի հրապարակման օր նշանակելու մասին

ԵԴ2/9837/02/24 քաղ. Երևան
25 Նոյեմբերի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ն.Ավետիսյանս ծանոթանալով «Ագաստ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումին և կից փաստաթղթերին.

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«Ագաստ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ կողմից վերջինիս և «Ագաստ» ՍՊԸ-ի միջև 12.01.2024թվականին կնքված թիվ «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/15-22» ծածկագրով պայմանագրի միակողմանի մասնակի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Նույն մասի երկրորդ պարբերության համաձայն՝ նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, գտնում եմ, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ, «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունից պետք է պահանջել «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ կողմից վերջինիս և «Ագաստ» ՍՊԸ-ի միջև 12.01.2024թվականին կնքված թիվ «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/15-22» ծածկագրով պայմանագրի միակողմանի մասնակի լուծումն հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածնով, Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.«Ագաստ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ կողմից վերջինիս և «Ագաստ» ՍՊԸ-ի միջև 12.01.2024թվականին կնքված թիվ «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/15-22» ծածկագրով պայմանագրի միակողմանի մասնակի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

2.«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունից պահանջել դատարան ներկայացնել «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից վերջինիս և «Ագաստ» ՍՊԸ-ի միջև 12.01.2024թվականին կնքված թիվ «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/15-22» ծածկագրով պայմանագրի միակողմանի մասնակի լուծման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3.Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

4.Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2025թվականի հունվարի 09-ին:

5.Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

**Դատավոր՝ Նաիրա Ավետիսյան**

Digitally signed by AVETISYAN NAIRA 7501660379
Date: 2024.11.25 14:55:18 AMT

---

*Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am*